ԲԱՑ ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Գասպարյան Ասյա, Արմավիրի մարզ, գյուղ Մայիսյան

Դասարան-6-11-րդ

Թեման-Ապահով Համացանց

Նպատակը և խնդիրները՝

- ուսումնասիրել սովորողների Համացանցից անվտանգ օգտվելու տեղեկացվածության աստիճանը,
- ծանոթացնել Համացանցից օգտվելու անվտանգության կանոններին,
- սովորեցնել ճիշտ կողմնորոշվել ինֆորմացիոն տարածության մեջ,
- խթանել օնլայն-տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործումը,
- սովորողների մոտ ձևավորել ինֆորմացիոն մշակույթ,
- անհրաժեշտ ինֆորմացիայի ինքնուրույն ձեռք բերման կարևորությունը
- մտածողության զարգացումը
- դաստիարակել կարգապահություն Համացանցում աշխատանքի ժամանակ

Սովորողը պետք է իմանա՝

- Համացանցի տրամադրած ինֆորմացիոն հնարավորությունները
- Համացանցում հանդիպող վտանգների մասին

Սովորողը պետք է կարողանա՝

- Աշխատել Web-բրաուզերների հետ
- Օգտվել ինֆորմացիոն ռեսուրսներից
- Որոնել ինֆորմացիա Համացանցում
- Պատասխանատվությամբ մոտենալ օնլայն-տեխնոլոգիաների օգտագործմանը

Ուսուցման մեթոդները՝ ինտերակտիվ մեթոդ, գործնական, պրակտիկ մեթոդ, պատմողական մեթոդ, պրոբլեմային մեթոդ

Ծրագրային-դիդակտիկ ապահովվածությունը՝

Տեսանյութ՝ «Дети растут, а детство уходит», «Հարցազրույց աշակերտների հետ», երաժշտություն՝«Веселый интернет», հարցաթերթիկներ, պաստառներ:

Բաց դասը նախատեսված էր անցկացնել կոնկրետ ինչ-որ դասարանում, բայց թեմայի արդիականությունը հաշվի առնելով՝ որոշվեց դասի մեջ ընդգրկել 6-11 դասարանների երեխաներին: Բաց դաս- միջոցառմանը ներկա էին 5-12-րդ դասարանների աշակերտները և ուսուցիչները, ծնողներ:

Դաս-միջոցառման ընթացքը՝

1-ին փուլ

Դասի հիմնական և գլխավոր հարցի ներկայացում

2-րդ փուլ

Դատավարություն

(քարտուղար, դատավոր, դատախազ, դատապաշտպան, վկաներ):

Քարտուղար. _ __ Ոտքի՛, դատարանն է գալիս;

___Խնդրում եմ նստել: դատական նիստը կվարի դատավոր Մյասնիկ Սահակյանը:

Դատավոր.___Այսօր լսվում է գործն ընդդեմ Համացանցի, որը մեղադրվում է դեռահասների վրա ունեցած իր վնասակար ազդեցության համար:

Մեղադրող կողմը ներկայացնում է դատախազ Աննա Անդրեասյանը: Պաշտպան կողմը ներկայացնում է դատապաշտպան Գոռ Ասպոյանը: Դահլիճում ներկա են նաև երդվյալ ատենակալները (5 հոգի): Դատական նիստի ընթացքը կսրբագրի քարտուղար Հռիփսիմե Յափունջյանը:

Խոսքը տրվում է մեղադրող կողմին:

Դատախազ - Համացանցը մեղադրվում է դեռահասների վրա իր ունեցած վատ ազդեցության համար, ինչը և այսօր մենք կապացուցենք:

Դատավոր.___Խոսքը տրվում է պաշտպան կողմին:

Դատապաշտպան.___ Ես պատրաստ եմ ապացուցելու Համացանցի բացարձակ անմեղությունը և ավելին՝ մատնանշելու նրա օգտակար հատկանիշները:

Դատավոր.___Շնորհակալություն: Անցնում ենք վկաների լսմանը: Քարտուղար, խնդրում եմ, ներս հրավիրեք 1-ին վկային:

Քարտուղար. _ __դատական նիստերի դահլիճ է հրավիրվում վկա Քրիստինե Եղիազարյանը:

Դատավոր.___Վկա՛, Դուք նախազգուշացվում եք, որ կեղծ ցուցմունք տալու դեպքում կենթարկվեք պատասխանատվության: Ներկայացեք խնդրեմ և պատմեք դատարանին, թե ինչ է Ձեզ հետ տեղի ունեցել:

1-ին վկա.___Ես Քրիստինե Եղիազարյանն եմ, Երևանի Պետական Համալսարանի ուսանողուհի: Մոտ մեկ ամիս աշխատում էի կուրսային աշխատանքիս վրա, որի թեման էր «Իմպրեսիոնիզմի ներկայացուցիչները Ֆրանսիայում»: Աշխատանքի ընթացքում օգտվել եմ տարբեր կայքերից և աշխատանքս գրեթե ավարտել էի: ԵՎ ահա երեք օր առաջ ես որոշեցի բացել աշխատանքի պահպանված ֆայլը և ավարտին հասցնել այն, բայց այն համակարգչից անհետացել էր: Ես փնտրեցի բոլոր հնարավոր եղանակներով, սակայն անարդյունք: Այդ ժամանակ ես հասկացա, որ համակարգչում վիրուսների առկայության պատճառով ֆայլն անհետացել է: ՈՒ հիմա ես չգիտեմ ինչ անել: Իմ մեկ ամսվա քրտնաջան աշխատանքը ջուրը լցվեց:

Դատավոր.___Վկա՛, Դուք ավարտեցի՞ք:

Վկա___Այո, պարոն դատավոր:

Դատավոր.___Խոսքը տրվում է մեղադրող կողմին:

Դատախազ.___ Ինչ եք կարծում, վկա, ով է մեղավոր Ձեր աշխատանքի կորստի մեջ:

1-ին վկա__ Դրանում մեղավոր է Համացանցը, որի շնորհիվ իմ աշխատանքն անհետացել է:

Դատախազ.___Մեղադրող կողմն այլևս հարցեր չունի այս վկային:

Դատավոր.___Պաշտպան կողմը հարցեր ունի՞ վկային:

Դատապաշտպան.___Այո, պարոն դատավոր: Վկա՛, ասացեք խնդրեմ, որտեղի՞ց եք վերցրել Դուք անհրաժեշտ ինֆորմացիա Ձեր կուրսային աշխատանքի համար:

Վկա__ Ես օգտվել եմ էլեկտրոնային գրադարաններից, պատահական կայքերից, օգտվել եմ համացանցումգոյություն ունեցող թանգարաններից:

Դատապաշտպան.___ Դուք այցելե՞լ եք Ֆրանսիա, Ձեր հետազոտությունները կատարելու համար:

Վկա__Ոչ, ես չունեմ այդ հնարավորությունը և օգտվել եմ Համացանցում:

Դատապաշտպան.___Ես կտամ իմ վերջին հարցը այս վկային: Ասացեք խնդրեմ, Ձեր համակարգչի վրա կա՞ տեղակայված հակավիրուսային ծրագիր :

Վկա___ Հակավիրուսային ծրագիր կա, սակայն իմ զբաղված լինելու պատճառով ես ուշադրություն չէի դարձրել այն հանգամանքին, որ լիցենզիայի ժամկետը լրացել է և այն պետք է թարմացնել:

Դատապաշտպան.___Պաշտպանությունն այլևս հարցեր չունի այս վկային:

Դատավոր.___Շնորհակալություն, վկա, խնդրում եմ, տեղ զբաղեցրեք դահլիճում:

Ուսուցիչ.__ տալիս է փոքր ինֆորմացիա վիրուսների և հակավիրուսային ծրագրերի մասին:

Հրավիրեք հաջորդ վկային:

Քարտուղար. _Դահլիճ է հրավիրվում 2-րդ վկան:

Դատավոր.___ Վկա՛, Դուք նախազգուշացվում եք, որ կեղծ ցուցմունք տալու դեպքում կենթարկվեք պատասխանատվության: Ներկայացեք խնդրեմ և պատմեք դատարանին, թե ինչ է Ձեզ հետ տեղի ունեցել:

2-րդ վկա--- Ես 7-րդ դասարանի աշակերտ Մովսես Դումանյանն եմ: Ցանկացա Համացանցից ներբեռնել էլեկտրոնային գիրք: Հայտնվեց հարցում, որտեղ պահանջվում էր իմ հեռախոսահամարը, հասանելիության կոդը տրամադրելու համար: Մի քանի րոպեի ընթացքում իմ հեռախոսին եկավ հաղորդագրություն հասանելիության կոդով, բայց էլեկտրոնային գիրքը ես այդպես էլ ներբեռնել չկարողացա: Փոխարենը 5 րոպե հետո ես ստացա հաղորդագրություն, որով տեղեկացվում էր, որ իմ հեռախոսաքարտի հաշվեկշիռը զրոյացված է, այնինչ ես բավականաչափ գումար ունեի քարտիս վրա:

Դատավոր.___ Վկա՛, Դուք վերջացրեցի՞ք:

Վկա__ Այո, պարոն դատավոր:

Դատավոր.___Մեղադրող կողմն ունի հարցեր ունի՞ վկային:

Դատախազ.__ Այո, պարոն դատավոր: Վկա, ասացեք խնդրեմ, Ձեզ մոտ եղե՞լ են նմանատիպ խնդիրներ անցյալում:

Վկա__Ոչ, անցյալում ես էլի տրամադրել եմ հեռախոսահամար, բայց նման դեպք չի պատահել:

Դատախազ.__Իսկ կայքում նշվա՞ծ էր, թե ինչու է պետք հեռախոսահամարը:

Վկա.__ Այո, գրված էր, որ հեռախոսահամարը պետք է , որպեսզի հաստատվի, որ ես ռոբոտ չեմ, այլ իրական օգտագործող:

Դատախազ.__ Շնորհակալություն: Ես այլևս հարցեր չունեմ:

Դատավոր.___Պաշտպան կողմն ունի հարցեր ունի՞ վկային:

Դատապաշտպան.___ Այո, պարոն դատավոր: Վկա, ասացեք խնդրեմ, նախքան այդ կայքը մտնելը Ձեր հակավիրուսային ծրագիրը ցույց տվե՞ց, որ կայքն անհուսալի է, ապահով չէ:

Վկա__ Այո, բայց ես երբեք ուշադրություն չեմ դարձրել այդ զգուշացումներին:

Դատապաշտպան.___ Այսինքն՝ Դուք զգուշացվել եք հնարավոր վտանգի մասին և, այնուամենայնիվ, մտե՞լ եք այդ կայքը:

Վկա__ Այո:

Դատապաշտպան.___ Շնորհակալություն: Ես այլևս հարցեր չունեմ այս վկային:

Դատավոր.___Շնորհակալություն, վկա, խնդրում եմ, տեղ զբաղեցրեք դահլիճում:

Խնդրում եմ դահլիճ հրավիրեք հաջորդ վկային:

Քարտուղար.—Դահլիճ է հրավիրվում 3-րդ վկան:

Դատավոր.___ Վկա՛, Դուք նախազգուշացվում եք, որ կեղծ ցուցմունք տալու դեպքում կենթարկվեք պատասխանատվության: Ներկայացեք խնդրեմ և պատմեք դատարանին, թե ինչ է Ձեզ հետ տեղի ունեցել:

3-րդ վկա__Անի խաչատրյան: Ես ուսանողուհի եմ: Երկու ամիս առաջ սոցցանցում ծանոթացա մի երիտասարդի հետ: Նա հետաքրքիր զրուցակից էր, ներկայացավ որպես Ճարտարագիտական համալսարանի ուսանող: Մենք հաղորդագրությունների միջոցով շփվում էինք : Որոշ ժամանակ անց նա խնդրեց իմ լուսանկարը և ես առանց երկար մտածելու ուղարկեցի այն: Հետո մեկ ամիս անց, մենք որոշեցինք հանդիպել և միմյանց ավելի լավ ճանաչել: Ինձ հետ հանդիպման եկավ միջին տարիքի մի տղամարդ, ոչ սթափ վիճակում : Ես հիասթափված հեռացա: Մենք այլևս չհանդիպեցինք և դադարեցրինք շփումը: Բայց ահա, մի քանի օր առաջ ես հայտնաբերեցի իմ նկարը ծանոթությունների կայքում: Ես վիրավորված եմ, բայց չգիտեմ ինչ անել:

Դատավոր.___ Վկա՛, Դուք վերջացրեցի՞ք:

Վկա__ Այո, պարոն դատավոր:

Դատավոր.___Մեղադրող կողմն ունի հարցեր ունի՞ վկային:

Դատախազ.__ Այո, պարոն դատավոր: Վկա, ասացեք խնդրեմ, իսկ Ձեր ծանոթն իր լուսանկարը ուղարկե՞լ էր Ձեզ:

Վկա__ Այո, բայց ինչպես պարզվեց հետագայում, դա ուրիշի լուսանկար էր:

Դատախազ.__ Շնորհակալություն: Ես այլևս հարցեր չունեմ:

Դատավոր.___Պաշտպան կողմն ունի հարցեր ունի՞ վկային:

Դատապաշտպան.___ Այո, պարոն դատավոր: Վկա, ասացեք խնդրեմ, հիմա Դուք օգտվո՞ւմ եք սոցցանցերի ծառայություններից:

Վկա__Այո, որովհետև ես ունեմ շատ բարեկամներ և ընկերներ տարբեր երկրներում և նրանց հետ շփման միակ հարմար եղանակը սոցցանցն է:

Դատապաշտպան.___Այսինքն, Համացանցը Ձեզ համար հանդիսանում է ամենահարմա՞ր միջոցը՝ շփվելու բարեկամների և ընկերների հետ:

Վկա__Այո:

Դատապաշտպան.___ Շնորհակալություն: Պաշտպանությունն այլևս հարցեր չունի:

Ուսուցիչ.—ներկայացնում է, թե ի՞նչ է ֆիշինգը, և ինչպես խուսափել դրանից:

Դատավոր.___Շնորհակալություն, վկա, խնդրում եմ, տեղ զբաղեցրեք դահլիճում:

Դատարանն անցնում է մտքերի փոխանակությանը: Խոսքը տրվում է մեղադրող կողմին:

Դատախազ.__Հարգելի դատավոր, ատենակալներ և ներկաներ, այսօր մենք ներկա ենք այն բանին, որ Համացանցը հանդիսանում է հանցագործների համար իրենց գործելու շատ հարմար միջավայր: Խարդախությունը և գողությունը, անձնական սեփականության և անհատական տվյալների նկատմամբ ոտնձգությունները, բազմաթիվ համակարգիչների աշխատանքի խափանումը , սոցցանցերում ոչ պատշաճ խոսելաձևը, ոչ վայել բառերի օգտագործումը սովորական երևույթներ են Համացանցում, ինչը և հաստատում է վկաների ցուցմունքը:

Ես վերջացրի, պարոն դատավոր:

Դատավոր.___Խոսքը տրվում է պաշտպան կողմին:

Դատապաշտպան.___ Շնորհակալություն, պարոն դատավոր:

Հարգելի ատենակալներ, ներկաներ, չնայած մեղադրող կողմի մեղադրանքներին, ես պատրաստ եմ ապացուցելու Համացանցի անմեղությունը : Ահա իմ եզրակացությունները: Եվ այսպես, եկեք Համացանցին նայենք հաշմանդամների աչքերով. Նրանց համար Համացանցն այժմ դարձել է շփման, հեռահար կրթություն

ստանալու և վերջապես աշխարհը ճանաչելու միակ հն արավորությունը: Շրջանավարտների համար համացանցը հնարավորություն է տալիս ավելի լավ պատրաստվել քննություններին, ընդունվել ԲՈՒՀ-եր ինչպես մեր երկրում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում: Յուրաքանչյուր գործունյա մարդ Համացանցում կարող է գտնել իր աշխատանքի համար օգտակար ինֆորմացիա և փոխանակվել դրանով աշխարհի տարբեր ծայրերում գտնվող իր կոլեգաների հետ: Մենք կարող ենք կարդալ ցանկացած երկրում: Եվ այս ամենի հնարավորությունը մեզ ընձեռում է Համացանցը:

Ես վերջացրի, պարոն դատավոր:

Դատավոր.___Հարգելի ատենակալներ, Դուք լսեցիք ամեն ինչ, խնդրում եմ կայացնել Ձեր արդարացի որոշումը:

Ատենակալ.__ _ Եվ այսպես, մենք ատենակալներս, խորհրդակցելով , կայացրինք հետևյալ որոշումը.

__Արդարացնել Համացանցին, բայց հետևյալ վերապահումներով.

- Ինֆորմացի չներբեռնել կասկած հարուցող կայքերից:
- Երբեք չպատասխանել սոցցանցերի անծանոթ օգտագործողների հարցումներին:
- Երբեք չտրամադրել անհատական, անձնական տվյալները, իսկ ավելի ստույգ՝ Ձեր հասցեն, հեռախոսահամարը, անձնագրային համարը, բանկային քարտի համարը և այլն:
- Ընտանիքի անդամների մասին ևս տեղեկատվություն մի տեղադրեք համացանցում:
- Եվ վերջինը՝ Ձեր անհատական համակարգիչների ինֆորմացիան պաշտպանեք հատուկ լիցենզիոն հակավիրուսային խրագրերի միջոցով:
  Ահա և բոլորը, պարոն դա տավոր:

Դատավոր.___ Գործն ընդդեմ Համացանցի, որը մեղադրվում էր վնասակար ազդեցություն ունենալու մեջ, հայտարարում եմ փակված: Համացանցը արդարացվեց, մենք համոզվեցինք, որ գրագետ և ճիշտ օգտվելու դեպքում Համացանցն ունի միայն դրական ազդեցություն:

Քարտուղար.—Ոտքի, դատավորը հեռանում է:

Ուսուցիչ.—Շնորհակալություն երեխաներ:

Այժմ ուզում եմ Ձեր ուշադրությանը ներկայացնել մի տեսանյութ, որտեղ հարցազրույց է վերցված մի քանի աշակերտներից: Փորձենք հասկանալ, թե հիմնականում ինչով են զբաղվում երեխաները Համացանցում:(տեսանյութ)

Ինչպես տեսնում ենք տեսանյութից և ինչպես ցույց են տվել թեսթային հարցման արդյունքները, աշակերտների մեծ մասը հիմնականում օգտվում են սոցցանցերից, խաղում են օնլայն խաղեր, որոշ մասը դիմում է համացանցի օգնությանը դասերը պատրաստելիս: Այս պարագայում, սեփական ապահովության համար, ուղղակի անհրաժեշտություն է պահպանել Համացանցից օգտվելու անվտանգության կանոնները: Ցավոք սրտի, ըստ հարցման արդյունքների, Ձեզանից մեծ մասն աղոտ է պատկերացնում, թե ինչ է զտիչ ծրագիրը:

Զտումը կապված է համացանցում ոչ պատշաճ բովանդակության հայտնաբերման և արգելափակման գործընթացին: Դա կատարվում է զննարկիչների, միջնորդ սպասարկուների կամ ծրագրային դիտարկիչների միջոցով:

· Անչափահասներին համացանցում ոչ պատշաճ բովանդակությունից պաշտպանելու համար, զտիչ ծրագրաշարերը արդյունավետորեն կարող են լրացնել ծնողների և մանկավարժների հմուտ ուղղորդմանը:

· Զտման այլընտրանք է «սպիտակ ցուցակների» կազմումը, որի միջոցով հասանելի կարող են լինել միայն նախապես հավանության արժանացած կայքերը:

Զտիչ ծրագրի օրինակ է ինտերնետ ցենզորը:

Տեսանյութի ներկայացում՝ «Дети растут, а детство уходит»:

Դասը շարունակվում է ինտերակտիվ եղանակով, որի ժամանակ ծավալվում է քննարկում աշակերտների միջոցով: Քննարկվում է ցուցադրված տեսանյութը: աշակերտները գալիս են այն եզրակացության, որ իրական գոյներով հարուստ կյանքին չպետք է խանգարի վիրտուալ աշխարհը, ընդհակառակը, պետք է լրացնի այն: Ուսուցչի կողմից ներկայացվում են ասացվածքներ, որոնք վերափոխված են Համացանցի թեմային համապատասխան, աշակերտները արտահայտում են իրենց կարծիքներն այն մասին, թե ինչ իմաստ է պարունակում ասացվածքը: Տրամաբանական հարց ու պատասխանների արդյունքում աշակերտները գալիս են այն եզրակացության, որ անհրաժեշտ կանոններին հետևելու արդյունքում Համացանցը միանշանակորեն օգտակար է և մեծ հնարավորություններ է մեզ ընձեռում:

Հնչում է երգ Веселый Интернет, դահլիճում նստած երեխաները ձայնակցում են, իսկ 7-րդ դասարանի աշակերտուհիները պար են բեմադրում: Դասի ավարտ:

Մայիսյանի միջնակարգ դպրոցի ուսուցիչներին և 5-12-րդ դասարանների աշակերտներին բաժանվել էին հարցաթերթիկներ Համացանցի օգտագործման վերաբերյալ: Հարցումների արդյունքների դասակարգումը ըստ տոկոսների հանձնարարվեց բարձր դասարանի աշակերտներին՝ ուսուցչուհու ղեկավարությամբ: Սա ապահովում է մաթեմատիկայի (վիճակագրություն) և ինֆորմատիկայի միջառարկայական կապը: Կից ներկայացնում եմ հարցաթերթիկի նմուշը:

ԹԵՍԹ

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ՀԱՄԱՑԱՆՑԸ ԻՆՁ ՎՐԱ

1. Օրական որքա՞ն ժամանակ եք անցկացնում Համացանցում._____
2. Գրանցվա՞ծ եք սոցցանցերում, եթե այո, ապա ո՞ր._____
3. Սոցցանցերում շփվու՞մ եք անծանոթ մարդկանց հետ_____
4. Երբևե ստացե՞լ եք կասկածելի բովանդակությամբ հաղորդագրություններ, եթե այո, ապա ի՞նչ բովանդակությամբ_____
   _____
   _____
5. Երբևե Ձեզ փորձե՞լ են ներքաշել աղանդավորական շարժումների մեջ_____
   _____
6. Երբևե դիմե՞լ եք ծնողների օգնությանը համացանցային վտանգներից խուսափելու համար_____
7. Բացի սոցցանցերից, ի՞նչ կայքեր եք այցելում_____
   _____
   _____
8. Օգտվու՞մ եք էլեկտրոնային գրադարաններից_____
9. Խաղու՞մ եք համացանցային խաղեր, եթե այո, ապա ինչպիսի՞ _____
   _____
10. Ի՞նչ եք կարծում, Դուք կախվածություն ունե՞ք Համացանցից_____
11. Ձեր համակարգչում կա՞ տեղակայված հակավիրուսային ծրագիր_____
12. Դուք գիտե՞ք, թե ինչ է զտիչ ծրագիրը_____
13. Հետևո՞ւմ եք, թե ինչո՞վ են զբաղվում Ձեր փոքր քույր, եղբայրները Համացանցում_____
14. Ինչպիսի խորհուրդ կտայիք նրանց, Համացանցից ավելի ապահով օգտվելու համար
    _____
    _____
    _____

15. Ձեր կարծիքով, ո՞րն է Համացանցից օգտվելու ամենակարևոր անվտանգության կանոնը

_____

_____

_____

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ